https://doi.org/10.46991/hc.2025.si1.096

The European Union and the issue of Genocide Condemnation and Prevention (The Case of the Armenian Genocide)

Arshaluys Teteyan

https://orcid.org/0009-0001-3613-4647
YSU Chair of History of Neighboring Countries of Armenia, Associate professor, PhD
a.teteyan@ysu.am

Keywords - European Union, Armenian Genocide, European Parliament resolution, International Remembrance Day, commemorative event, Holocaust, December 9.

The problem of recognition and condemnation of 1915 Armenian Genocide by the member states of EU, European institutions especially European Parliament became the subject of various scientific studies. problem is that this studies emphasized and underlined the role of European Parliament and his resolutions and their impact on the political process. But even more important to examine not only European Parliemant resolutions, which usually have consultative significance consultative importance, but the action and steps of athers bodies of the Union their proportionality, policy of "two weights two measures".

For the full and detailed study of EU's policy regarding recognition and condemnation of genicides requires compare side by side the action and steps of others bodies of the Union towards Armenian Genocide, Holocaust committed against the Jewish people during World War II, Rwandan genocide, Srebrenica massacre and other crimes against humanity. That's how we can assess effectiveness of the mechanisms which have justified themselves, and also reveal the incomplete steps that left past crimes without impunity, thereby left the open path for future atrocities.

History and Culture. Journal of Armenian Studies, special issue1, 2025, pp. 96-105.

Received: 12.11.2024
Revised: 17.12.2024
Accepted: 24.04.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Եվրոպական Միությունը և ցեղասպանությունների դատապարտման ու կանխարգելման խնդիրը (Հայոց ցեղասպանության օրինակով)

Արշալույս Տետեյան
ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոն, դոցենտ, պ.գ.թ.

Հիմնաբառեր - Եվրոպական միություն, Հայոց ցեղասպանություն, Եվրոպական խորհրդարանի բանաձև, հիշատակի միջազգային օր, հիշատակի միջոցառում, Հոլոքոսթ, դեկտեմբերի 9:

ԵՄ անդամ երկրների, ինչպես նաև եվրոպական կառույցների՝ մասնավորապես Եվրոպական խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության դատապարտման պատմությունը բավական ուսումնասիրվել է՝ դառնալով մի շարք գիտական աշխատությունների առարկա: Խնդիրն այն է, որ այստեղ հիմնականում շեշտադրվել է Եվրոպական խորհրդարանի գործոնը, վերջինիս կողմից ընդունված բանաձևերը և դրանց ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա: Անհրաժեշտաբար պետք է գիտական ուսումնասիրության առարկա դարձնել ոչ միայն ԵՄ խորհրդարանական մարմնի, որի բանաձևերը շատ դեպքերում ունեն միայն խորհրդատվական նշանակություն, այլև վերջինիս մյուս կառույցների քայլերը, դրանց համաչափությունը, տարբեր խնդիրների պարագայում՝ «երկու չափ, երկու կշիռ» մոտեցման կիրառումը և այլն: Վերջինս հատկապես ակնառու է դառնում ԵՄ հռչակած սկզբունքների և տարբեր երկրներում տեղ գտած ցեղասպան գործողությունների առանձին դրվագների նկատմամբ ձեռնարկված քայլերի համեմատական վերլուծության պարագայում:

Այսպիսով, ցեղասպանությունների կանխարգելման և դատապարտման ոլորտում ԵՄ ամբողջական և համապարփակ քաղաքականության ուսումնասիրության համար Հայոց ցեղասպանության դատապարտման քայլերը անհրաժեշտ է զուգահեռել Երկրորդ աշխարհամարտի տարիներին հրեաների նկատմամբ իրականացրած Հոլոքոսթի, Ռուանդայի, Սրեբրենիցայի ցեղասպանությունների և մարդկության դեմ ուղղված այլ հանցանքների հետ: Այսպես միայն կարող են երևան գալ ինչպես իրենց արդարացրած և կանխարգելող նշանակություն ունեցած մեխանիզմները, այնպես էլ կեսկատար քայլերը, որոնք, անպատիժ թողնելով նախկին հանցանքները, նոր բռնություններ սանձազերծելու հնարավորություններ կընձեռնեն ապագայում:

Европейский Союз и вопрос осуждения и предотвращения геноцидов (на примере Геноцида армян)

Аршалуйс Тетеян
ЕГУ Кафедра истории сопредельных с Арменией стран, доцент, к.и.н.

Ключевые слова - Европейский Союз, Геноцид армян, резолюция Европейского парламента, международный день памяти, памятная мероприятия, Холокост, 9 декабря.

Вопрос признания и осуждения геноцида армян 1915 года со стороны стран членов ЕС, европейских институтов, в частности Европейского парламента стала темой нескольких научных исследований. Вопрос в том, что в этих исследованиях была подчеркнута и акцентирована роль Европейского парламента и принятые им резолюции и их влияние на политические процессы. Но что более важно изучить не только резолюции парламентского института ЕС, которые часто имеют консультативное значение, а действие и шаги других органов Союза, их пропорциональность, принимаемые в разных случаях двойные стандарты.

Для полного и всестороннего изучения политики ЕС в области признания и осуждения геноцидов необходима сопоставить и параллельно изучить действия и шаги ЕС по отношению геницида Армян, осуществленного против еврейского народа во время второго мирового войны Холокоста, Руандийского геноцида, резни в Сребренице и других преступлений против человечества. Только так можно судить об эффективности механизмов, которые оправдали себя, а также выявить неполноценные шаги, которые оставили безнаказанно давнные преступления, тем самым оставили путь открытым для новых преступлений.

* * *

Մուտք: Եվրոպական խորհրդարանի և եվրոպական կառույցների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման թեման եղել է և շարունակում է մնալ տարբեր բնագավառների հետազոտողների հետաքրքրությունների ոլորտում: Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո, երբ հումանիտար գիտությունները և ի մասնավորի՝ պատմագիտությունը ձերբազատվեցին խորհրդային վարչակարգի պարտադրած քաղաքական և գաղափարական կապանքներից, ստեղծվեց 1915 թ. Հայոց ցեղասպանության հիմնահարցը, եվրոպական երկրներում և կառույցներում դրա արծարծումը և դատապարտումը ուսումնասիրելու հնարավորություն: Այս թեմային

նվիրված նյութեր տպագրվեցին մամուլում, գրվեցին գիտական և վերլուծական հոդվածներ [Մարուքյան Ա., 2014, 234, Տետեյան Ա., 2020, 150, Ходжаян К., 2014, 69]: Սակայն հետազոտողների ուշադրությունից դուրս մնաց կարևոր մի հիմնահարց՝ ի՞նչ դիրքորոշում ունի և ի՞նչ քայլեր է ձեռնարկել Եվրոպական միությունը մարդկության դեմ հանցագործություն՝ ցեղասպանություն համարվող իրադարձությունների դատապարտման և կանխարգելման համար, և որքանո՞վ են դրանք համադրելի և համանման 1915 թ. Հայոց մեծ եղեռնի պարագայում:

Ներկայացված հոդվածը նպատակ է հետապնդում դիտարկել վերջին տարիներին ԵՄ-ի իրականացրած քայլերը ցեղասպանությունների դատապարտման և կանխարգելման ուղղությամբ և դրա համատեքստում եվրոպական այս կառույցի՝ Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցում որդեգրած քաղաքականությունը: Դժբախտաբար այս հարցում Եվրոպական միության քայլերն ու ԵՄ բարձրաստիճան պաշտոնյաների խոսույթը բավական տարբերվում են: «Եթե մենք պաշտպանենք փաստերը, կարող ենք կոտրել ատելության և բռնության շղթան», - նշում է Եվրոպական հանձնաժողովի ղեկավար Ուրսուլա Ֆոն Դեր Լայենը՝ 2022 թ. Համաշխարհային Հոլոքոստի հիշատակի օրը Եվրոպական հրեական կոնգրեսում իր ելույթի ժամանակ [Speech by President von der Leyen at the International Holocaust Remembrance Day Commemoration of the European Jewish Congress]: Արդյո՞ք ԵՄ-ին հաջողվել է «պաշտպանել փաստերը» և, անաչառ գնահատական տալով դրանց, «կոտրել ատելության և բռնության շղթան»: Այս հարցերի պատասխանները գտնելուն է միտված XX դարում տեղի ունեցած ցեղասպանությունների նկատմամբ ԵՄ քայլերի և դիրքորոշումների ամփոփ անդրադարձը:

Ցեղասպանության հանցագործության զոհերի հիշատակի օրերի սահմանումը Եվրոպական միությունում: Շատ հաճախ, երբ խոսվում է Եվրոպական միության կողմից 1915 թ. Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հիմնահարցի մասին, առաջ են քաշվում Եվրոպական խորհրդարանի տարբեր տարիներին ընդունված բանաձևերը: Հայտնի է, որ դեռևս 1987 թ. հունիսի 18-ին Եվրախորհրդարանն ընդունել է «Հայկական հարցի քաղաքական լուծման» մասին բանաձևը, որի հիմնական դրույթները վերահաստատվեցին 2015 թ. Ապրիլին՝ Հայոց ցեղասպանության հարյուրերորդ տարելիցի կապակցությամբ ընդունված փաստաթղթում [Եվրոպական խորհրդարանի բանաձևը «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» 18 հունիս 1987 թ., European Parliament resolution of 15 April 2015 on the centenary of the Armenian Genocide]:

Անժխտելի է Եվրոպական խորհրդարանի բանաձևերի կարևորությունն ու նշանակությունը: Սակայն պետք է հիշատակել նաև, որ դրանցում առաջ քաշված առաջարկները շատ հաճախ մնացին անարձագանք՝ մեծամասամբ դրանք կյանքի կոչելու

իրավասությունն ունեցող ԵՄ մյուս կառույցների և անդամ երկրների որդեգրած քաղաքականության պատճառով: Խոսքն այստեղ ԵՄ նախագահության, Եվրոպական հանձնաժողովի, ԵՄ արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով գերագույն հանձնակատարի և այլ օղակների մասին է: Բազմաթիվ հակասական դրսևորումներ ի հայտ են գալիս, երբ Հայոց ցեղասպանության դատապարտման հարցը դիտարկում ենք վերոնշյալ կառույցների՝ մարդկության դեմ ուղղված այլ հանցագործությունների նկատմամբ քաղաքականության համադրությամբ:

Ինչպես հայտնի է, 2015 թ. սեպտեմբերի 11-ին ՄԱԿ-ը դեկտեմբերի 9-ը սահմանեց՝ որպես «Ցեղասպանության հանցագործության զոհերի հիշատակի և արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր»: Յուրաքանչյուր տարի՝ դեկտեմբերի 9-ին, ԵՄ արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով գերագույն հանձնակատարը հանդես է գալիս հատուկ հայտարարությամբ: Այդ հայտարարությունները հիմնականում աչքի են ընկնում ԵՄ պարտավորությունների, հանձնառությունների մասին ընդհանուր հիշատակություններով: 2015-2024 թթ. ընթացքում այս պաշտոնը զբաղեցրած Ֆրեդերիկա Մոգերինին և Ժոզեպ Բորելը անվանապես չեն անդրադառնում 20-րդ դարում տեղ գտած մարդկության դեմ հանցագործություններից որևէ մեկին: Եվ, ինչպես արդեն նշեցինք, սահմանափակվում են միայն ԵՄ-ի ստանձած պարտավորություններով և առաքելությամբ:

Խնդիրն այն է, որ բացի դեկտեմբերի 9-ի հայտարարությունից, ԵՄ արտաքին հարաբերությունների գլխավոր պատասխանատուն ի պաշտոնե հայտարարություններ է հրապարակում նաև 20-րդ դարում տեղ գտած մի քանի ցեղասպանությունների՝ հունվարի 27-ին՝ Հոլոքոստի, ապրիլի 7-ին՝ Ռուանդայի, հուլիսի 11-ին՝ Սրեբրենիցայի, օգոստոսի 2-ին՝ գնչուների ցեղասպանության զոհերի հիշատակի օրերի կապակցությամբ: Սակայն, ինչպես տեսնում ենք, այս շարքում բացակայում է ապրիլի 24-ը՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը: Մինչդեռ 1987 թ. հուլիսին ընդունված Եվրոպական խորհրդարանի բանաձևը առաջարկում էր սահմանել «20-րդ դարում գործադրված ցեղասպանությունների և մարդկության դեմ ոճրագործությունների հիշատակի օր», մասնավորապես այն ոճրագործությունների, որոնց զոհ գնացին հայերն ու հրեաները: [Եվրոպական խորհրդարանի բանաձևը «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» 18 հունիս 1987 թ.]:

Դժբախտաբար, այս կետը Հայոց ցեղասպանության դեպքում մնաց միայն թղթի վրա: Բանն այն է, որ 2015 թ. ապրիլին եվրոպացի պատգամավորները մեկ անգամ ևս հիշեցին դրա մասին, սակայն այս անգամ սահմանափակվեցին ընդհանրական՝ ցեղասպանության զոհերի հիշատակի օր սահմանելու գաղափարով [European Parliament resolution of 15 April 2015 on the centenary of the Armenian Genocide]: Ակնհայտ է, որ սա դառնում է փաստերի և

իրողությունների ընտրողաբար և կամայական կիրառում: Ընդ որում սա հակասում է նաև Ռաֆայել Լեմկինի գաղափարներին, որովհետև որևէ մեկի համար գաղտնիք չէ, և հրեա իրավաբանն ինքն էլ իր աշխատություններում գրում է, որ «գենոցիդ» հասկացության սահմանումն ու բովանդակությունը տվել է 20-րդ դարի սկզբին՝ այն էլ Հայոց ցեղասպանությունը ուսումնասիրելով:

ԵՄ-ն և ցեղասպանությունների զոհերի հիշատակին նվիրված միջոցառումները: Հատկանշական է, որ 2015 թ. ապրիլին ընդունված բանաձևով Եվրոպական խորհրդարանը կոչ էր անում Հանձնաժողովին և Խորհրդին միանալ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներին: Սակայն 2015 թ. ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում ներկա էին միայն Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար Տրայան Հրիսթեան և Եվրոպական խորհրդարանի փոխնախագահ Ռիչարդ Չարնեցկին [Ինչպես 60 երկրների պատվիրակությունները հավաքեցին անմոռուկ-ծաղկեպսակը]:

Համեմատության համար բերենք մի քանի օրինակներ. 2020 թ. հունվարի 23-ին Երուսաղեմում «Հոլոքոսթի հիշատակի համաշխարհային ֆորում»-ին ԵՄ-ն ներկայացնում էին կառույցի երեք գլխավոր պաշտոնյաները՝ Եվրոպական խորհրդի, Հանձնաժողովի և Խորհրդարանի նախագահներ Շառլ Միշելը, Ուրսուլա Ֆոն Դեր Լայենը և Դավիդ Սասոլին: Նույն ժամանակ հանձնաժողովի երկու հանձնակատարներ Լեհաստանում էին՝ Աուշվիցի ազատագրմանը նվիրված միջոցառումներին մասնակցելու համար [Presidents von der Leyen, Sassoli and Michel attend the “World Holocaust Forum 2020” in Jerusalem]:

2019 թ. ապրիլի 7-ին Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժան-Կլոդ Յունկերը և Միջազգային համագործակցության և զարգացման հարցերով հանձնակատար Նևեն Միմիկան Կիգալիում մասնակցեցին Ռուանդայում թութսիների ցեղասպանության 25-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին [European Commission to commemorate 1994 Genocide against the Tutsi in Rwanda]: Իսկ 2021 թ. հոկտեմբերին Ռուանդայում գտնվող ԵՄ արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով գերագույն հանձնակատար Ժոզեպ Բորելը համաշխարհային հանրության անունից ներողություն խնդրեց՝ ողբերգությունը չկանխելու և չխուսափելու համար [Rwanda: Remarks by High Representative/Vice-President Josep Borrell at the Interpeace Project]:

2020 թ. հուլիսին ԵՄ ակտիվորեն ներգրավվեց Սրեբրենիցայի հիշատակի միջոցառումներին՝ հայտարարելով, որ պատրաստ է աջակցել հիշատակի կենտրոնի բացմանը՝ տրամադրելով 340 հազար եվրո: Կորոնավիրուսի համավարակի պատճառով Սրեբրենիցայի 25-րդ տարելիցի միջոցառումներին Ուրսուլա ֆոն Դեր Լայենը հանդես եկավ տեսաուղերձով [Srebrenica: remembering the past to build a better future together]:

Այս չոր փաստերի արձանագրումն արդեն ինքնին խոսում է ԵՄ պաշտոնյաների կողմից ցեղասպանությունների ճանաչման և դատապարտման հարցում «երկու չափ, երկու կշիռ» սկզբունքի առկայության մասին: Այս իրողությունները առավել ակնհայտ են դառնում, երբ խոսքը գնում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման մասին: Այստեղ տեղի է ունենում խոսույթի փոփոխություն և առաջին պլանում է հայտնվում երկխոսության և հաշտեցման գաղափարը: Նույնիսկ Եվրոպական խորհրդարանի նախագահ ազգությամբ գերմանացի Մարտին Շուլցը 2015 թ. ապրիլի 24-ին գրում է. «Նպատակը լռությունը հաղթահարելն է և ոչ թե իրար մասին, այլ իրար հետ երկխոսելը: Միակ ուղին առաջընթացն է՝ ազնիվ երկխոսությունը հայերի ու թուրքերի միջև այն մասին, թե ինչ է նշանակում սարսափելի անցյալն այսօրվա համար, և ինչպես հիշողությունը կարող է հանգեցնել երկու երկրների միջև լավ հարաբերությունների հաստատման ապագայում» [Մարտին Շուլց. Միակ ուղին առաջընթացն է՝ հայերի ու թուրքերի երկխոսությունը]:

ԵՄ, Հայոց ցեղասպանության ճանաչումը և հայ-թուրքական հարաբերությունները: Երկխոսության և հաշտեցման գաղափարը առավել հաճախ սկսեց հայտնվել եվրոպական պաշտոնյաների խոսույթում, հատկապես 2005 թ.՝ Թուրքիայի հետ ԵՄ բանակցությունների վերսկսման և Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի կապակցությամբ: Մեկ տարի անց՝ 2006 թ. ԵՄ որդեգրած հակասական դիրքորոշումն էլ ավելի ակնհայտ դարձավ, երբ Ֆրանսիայի խորհրդարանի կողմից ընդունվեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքը: Եվրամիության գործադիր մարմնի խոսնակը բարձրաձայնեց կառույցի տեսակետը. «Եթե այս օրենքն ուժի մեջ մտնի, այն կարգելի բանավեճը և երկխոսությունը, որոնք անհրաժեշտ են այս հարցի շուրջ համաձայնության հասնելու համար»: Ավելին, Թուրքիայում Եվրոպական խորհրդարանի պատվիրակության փոխնախագահ Էնդրյու Դաֆն էլ հայտարարեց. «Ֆրանսիան մեծ վնաս է հասցրել Եվրամիությունև - Թուրքիա հարաբերություններին և մեծ հաշվով՝ նաեւ Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերություններին: Թուրքիայի առաջադեմ ուժերը անհարկի հարված են ստացել: Եվրոպացի պաշտոնյան կարծիք էր հայտնում, որ Ֆրանսիայում ընդունված օրենքը հակասում է մարդու իրավունքներին վերաբերող եվրոպական օրենսդրությանը և կոչով դիմում էր ֆրանսիական Սենատին՝ մերժել օրենքը [Եվրահանձնաժողովը քննադատել է Հայոց ցեղասպանությանը վերաբերող օրենքի ընդունումը Ֆրանսիայում]:

Ցավալիորեն այս դիրքորոշումները հիշեցնում են 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի ցեղասպանության նկատմամբ մեծ տերությունների արձագանքը, որոնց մասին այնքան դիպուկ արտահայտվում է Ռոմեն Ռոլանը՝ գրելով, որ «Դրեյֆուսի գործի» ընթացքում խելացնոր, անկեղծ վշտով ու կատաղությամբ ոճիր էին գոռում նրանք, ովքեր խուլ էին ձևանում Հայաստանում տեղի

ունեցող իրադարձությունների ժամանակ [Ռոմեն Ռոլան եւ հայկական ջարդերը]: Ընդ որում, ֆրանսիացի գրողի հիշողությունները եզակի չեն: Շատ ու շատ մտածողներ այդ շրջանում բարձրաձայնել են այս հակասական իրողությունների մասին, որոնք տեղի էին ունենում Եվրոպայում 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբին:

Դժբախտաբար, Հայոց ցեղասպանության հարցում եվրոպական պաշտոնյաների երկմտանքը և երկբայություններն են պատճառը, որ ԵՄ անդամ երկներում կարող են տեղի ունենալ այնպիսի իրադարձությունների՝ ինչպես օրինակ Իտալիայում Արմին Վեգների լուսանկարների ցուցահանդեսի փակումը, կամ Ատոմ Էգոյանի «Արարատ» ֆիլմի արգելումը [Իտալիոյ եւ Ադրբեջանի մէջ խոչընդոտուած «Արարատ»ի ցուցադրութիւնը]:

Փաստն այն է, որ ԵՄ պաշտոնյանները հաճախ բարձրաձայնում են կառույցի հանձնառությունների, պարտավորությունների մասին՝ հղում անելով նաև վերջին տարիներին ցեղասպանությունների կանխարգելմանն ուղղված մեխանիզմներին: Այս շարքում, իհարկե, կարևոր դեր է խաղում 2002 թ. հիմնադրված «Ցեղասպանության ցանց» (Genocide Network) կոչվող նախաձեռնությունը: Դեռևս 2019 թ. դեկտեմբերի 9-ին Ժոզեպ Բորելլն իր հայտարարության մեջ նշում էր, որ ցեղասպանությունները մեկ գիշերվա ընթացքում չեն տեղի ունենում: Դա գործընթաց է: Եվ միշտ էլ կան նախազգուշացնող նշաններ: Թերևս հենց այդպիսի նախազգուշացնող նշան էր 2022 թ. դեկտեմբերի 12-ին ադրբեջանական իշխանությունների կողմից Արցախը Հայաստանի հետ կապող ճանապարհի փակումը և արցախահայությանը սովամահության դատապարտումը: ԵՄ հայտարարություններում շատ հաճախ հիշատակվում է Ռաֆայել Լեմկինը, Նյուրենբերգի դատավարությունը, որի գործն այժմ շարունակվում է ի դեմս Միջազգային քրեական դատարանի: Այս նույն դատարանի նախկին գլխավոր դատախազ Լուիս Մորենո Օկամպոն բազմիցս հայտարարել է, որ այն ինչ իրագործվել է Արցախի Հանրապետությունում համարվում է ցեղասպանություն՝ 1948 թ. ՄԱԿ-ի Ցեղասպանության մասին կոնվենցիայի II հոդվածի «գ» կետի համաձայն [Լուիս Մորենո Օկամպո. Ալիեւը ցեղասպանություն է գործել]:

Դժբախտաբար, այս բոլոր իրողությունների արձանագրումը ցույց է տալիս, որ ինչպես միջազգային կառույցների, այնպես էլ Եվրոպական միության առաջ քաշած «Այլևս երբեք»-ը դառնում է որևէ պարտավորություն և պարտականություն չպարտադրող, պարզապես այս կամ այն առիթով բարձրաձայնվող կարգախոս: Կարող է թվալ, որ վերջին միտքը խիստ քննադատական է հնչում: Մինչդեռ, համաշխարհային քաղաքականության կարևոր դերակատարներից մեկի՝ Եվրոպական միության համարժեք և անաչառ գնահատականները և քայլերը իսկապես կարող են ունենալ զսպող և կանխարգելող նշանակություն, ինչը ոչ մեկ անգամ ապացուցվել է աշխարհում տեղ գտած տարաբնույթ

իրադարձությունների ժամանակ: Հակառակ պարագայում, եվրոպական այս առանցքային կառույցը կարող է ապահովել հարուստ նյութ հակաուտոպիական գրականության համար՝ իր հակասական և անհետևողական քայլերի շնորհիվ:

Վերջաբան: Եվրոպական միության՝ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների դատապարտմանն ուղղված քայլերի արձանագրումը և վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք և՛ իրենց բովանդակությամբ, և՛ խոսույթով շատ հաճախ միանշանակ չեն: Ցավալիորեն շատ հաճախ պատմական ճշմարտությունը երկրորդվում է արդի քաղաքական առաջնահերթություններին, ինչն ակնհայտորեն դրսևորվում է Հայոց ցեղասպանության դատապարտման պարագայում: Դժբախտաբար, այս գործելաոճի արդյունք է նաև ցեղասպանությունների կանխարգելմանն ուղղված քայլերի կեսկատարությունը և անարդյունավետությունը: Ըստ այդմ, անհրաժեշտ է առաջին հերթին ճանաչել և դատապարտել պատմական ճշմարտությունը, սահմանել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր՝ դրանից բխող իրողություններով: Բացի այդ ԵՄ-ի համար յուրահատուկ փորձաքար կարող է դառնալ Արցախի հայ բնակչության բռնի տեղահանության դատապարտումը, հայրենիք վերադառնալու իրավունքի երաշխավորումը և հետևողական իրագործումը:

Գրականության ցանկ

Inch'pes 60 yerkrneri patvirakut'yunnery havak'ets'in anmorruk-tsaghkepsaky https://news.am/arm/news/264368.html **(in Armenian)**

Italioy yev Adrbejani mej khoch'yndotuats «Ararat»i ts'uts'adrut'iwny, «Yarraj» orat'ert', 30 april 2003: **(in Armenian)**

Yevrahandznazhoghovy k'nnadatel e Hayots' ts'eghaspanut'yany veraberogh orenk'i yndunumy Fransiayum https://www.azatutyun.am/a/1584504.html **(in Armenian)**

Hayots' ts'eghaspanuYevropakan khorhrdarani banadzevy «Haykakan harts'i k'aghak'akan lutsman masin» 18 hunis 1987 t'.

http://www.genocide-museum.am/arm/European_Parliament_Resolutio3.php **(in Armenian)**

Luis Moreno Okampo. Aliyevy ts'eghaspanut'yun e gortsel

https://mediamax.am/am/news/society/54650/ **(in Armenian)**

Martin Shults'. Miak ughin arrajynt'ats'n e, hayeri u t'urk'eri yerkkhosut'yuny https://news.am/arm/news/263824.html **(in Armenian)**

Maruk'yan A., 2014 - Maruk'yan A., Hayots' ts'eghaspanut'yan hetevank'neri haght'aharman himnakhndirnern u patmairavakan himnavorumnery, Yerevan, 2014, 332 ej: **(in Armenian)**

Rromen Rrolan yev haykakan jardery, «Yarraj» orat'ert', 23-24 dektember 2000: **(in Armenian)**

Teteyan A., 2020 - Teteyan A., Hayots' ts'eghaspanut'yan chanach'man harts'y yev Lerrnayin Gharabaghi himnakhndiry Yevropakan khorhrdarani banadzeverum, «Patmut'yun yev mshakuyt'» hayagitakan handes, t'iv 1, 2020, ej 150-156: **(in Armenian)**

Khodzhayan K., 2014 - Khodzhayan K., Rol' i znacheniye Yevropeyskogo parlamenta v deyatel'nosti Armyanskikh organizatsiy diaspory, «21-y vek», № 1, 2014, str. 69-85. **(in Russian)**

European Commission to commemorate 1994 Genocide against the Tutsi in Rwanda https://www.brusselstimes.com/55214/european-commission-commemorates-1994-genocide-against-the-tutsi-in-rwanda

European Parliament resolution of 15 April 2015 on the centenary of the Armenian Genocide https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-8-2015-0094_EN.html

Presidents von der Leyen, Sassoli and Michel attend the "World Holocaust Forum 2020" in Jerusalem https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/ip_20_110

Rwanda: Remarks by High Representative/Vice-President Josep Borrell at the Interpeace Project https://www.eeas.europa.eu/eeas/rwanda-remarks-high-representativevice-president-josep-borrell-interpeace-project_en

Speech by President von der Leyen at the International Holocaust Remembrance Day Commemoration of the European Jewish Congress https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/STATEMENT_22_622

Srebrenica: remembering the past to build a better future together https://www.eeas.europa.eu/eeas/srebrenica-remembering-past-build-better-future-together_en